



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԵՐԻ ԳՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԶԵՂԱՎԵՐԻ ԲՈՒԺԵՐԱՅԻ

# ՄԱՍՈՒԹՅՈՒՆԸ

85

R-89

ՊԵՏՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԿՈՎԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1937

31 MAY 2006

19 NOV 2010

ԿԱՍՏԻԿՆԵՐԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԶՈՎԱՆՆԻ ԲՈԿՍԶԻՈ

85  
Բ-82  
ԱՐ.

# ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

Ֆրանս. քարզմանեց  
ՎԱՀՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՊԵՏՎԱՑ

ՀԱՅԵՐԾ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1937

10 6 MAR 2013

Խմբագիր Գ. Թեղուկի բաշխություն  
Ֆերագիր՝ Ան. Թառապարան  
Սբբագրիչ Ա. Շահբաղյան

7922

## ԶՈՎԱՆԻ ԲՈԿԱՁԻՈ

(1313-1375)

Խտալական գրող Բոկաչիոյի կյանքը և գրական գործունելությունը վերաբերվում ե այն ժամանակաշրջանին, վորը Արևմտյան Յեվրոպայի գրականության պատմության մեջ հայտնի յե վերածնության եպոխա անունով: Բոկաչիոն, Շեքսպիրի և Սերվանտեսի հետ միասին հանդիսանում ե վոչ սիայն այդ եպոխայի, այլ և առհասարակ համաշխարհային գրականության խոշորագույն կլասիկներից մեկը:

Բոկաչիոն ծնվել ե Ֆլորենցիայի հայտնի վաճառականի ընտանիքում, Հայրը ամեն կերպ աշխատում եր վորդուն պատրաստել վաճառականության համար, բայց յերբ համոզվեց վոր վորդին, գեղարվեստական գրականությամբ տարվելու պատճռով, վաճառական դառնալու վոչ մի հետաքրքրություն հանդեռ չի բերում, վորոշեց ուսման բնույթը փոխել: Այդ նպատակով 1324 թվ. Բոկաչիոյին տանում ե նեապոլ և ստիպում ե նրան զբաղվել իրավաբանությամբ: Բոկաչիոն, վորը շատ վաղ հասակից անսահման հետաքրքրություն եր հանդես բերում դեպի պոետիան և հաշվապահական մատյանները, հաշիվները գրանցելու փոխարեն, լցնում եր իր բանաստեղծություններով, այս անգամ նույնպես չի արդարացնում հոր հույսերը: Մոտ 16 տարի մնալով նեապոլում, իրավաբանական գիտությունները ուսումնասիրելու փոխարեն, նա ուսումնասիրում ե մի շարք լեզուներ (հունարեն, լատիներեն, Փրանսերեն և այլն) և հիմնավորապես ծանոթանում ե անտիկ աշխարհի կուլտուրայի, արվեստի և գրականության հետ: Նա մեծ հետաքրքրություն ե հանդես բերում հատկապես դեպի ժողովրդական բանահնուառությունը (Փոլիլոր), ուսումնասիրում ե զրի յե առնում բազմաթիվ ազգերի ժողովը ըրդական լեզենդներ, պատմվածքներ, ասացվածքներ, և ապալայն չափով ողտագործում կամ վերամշակում ե այդ բոլորն իր ստեղծագործությունները գրելիս: Այս հիմքի վրա յե առաջանում նրա աշխարհահռչակ «Պեկամերուն-ը»



1564

38

1341 թվ. Բոկաչիոն հոր պահանջով վերադառնում և Ֆլորենցիա: Բոկաչիոյի մայրն այդ ժամանակ մահացել էր, իսկ հայրը, ֆինանսական կրիզիսի հետևանքով՝ սնանկացել: Բոկաչիոն պետք եղաներ հորը: Նա ընտանեկան մանր գործերով զբաղվելուց բացի ակտիվ կերպով մասնակցում է Ֆլորենցիայի հասարակական—քաղաքական կյանքին: Նա չի մոռանում նաև իր սիրած առարկան—գրականությունը: Թարգմանել եւ տալիս Հոմերոսին (լատիներեն), ուսումնասիրում եւ Դանտեյի կյանքը և զրական գործունեյությունը, հրապարակական դասախոսություններ եւ կարգում Դանտեյի մասին: Գրում եւ Դանտեի կենաքրությունը: Բոկաչիոն Դանտեյի առաջին կենսագիրը և մեկնաբանողն եւ: 1345 թվ. նա նորից գնում եւ նեապոլ, բայց այս անգամ յերկար չի մնում, վորովհետեւ 1349 թվ. մահանում եւ հայրը և նա ստիպված ել լինում վերադառնալ Ֆլորենցիա: Բոկաչիոն կյանքի վերջին տարիները անց եւ կացնում ծայրահեղ կարեքի և թշվառության մեջ: Մահանում եւ ծանր և յերկարատես հիվանդությունից հետո և թաղվում եւ Զերտալդոյում:

Իտալական վերածնության հպոխայի գրականությունը բացի Բոկաչիոյից, տվել են նաև յերկու խոշոր գրողներ՝ Դանտե և Պետրարկա: Դանտեն հանդես եւ յեկել Բոկաչիոյից առաջ, իսկ Պետրարկան յեղել են նրա ժամանակակից գրող: Նա այս գրողներից շատ բան սովորեց, բայց նա նրանցից տարբերվում եւ նրանով, վոր Բոկաչիոյի մոտ իտալական վերածնության եպոխան ստացավ ավելի ցալառն և ավելի ամբողջական արտահայտություն: Դանտեն, ինչպես գրել եւ Ենգելալը նրա մասին, հանգիստանում եր Փեղալական միջնադարի վերջին և նոր ժամանակա առաջին պոետը: Նրա «Աստվածային կատակերգություն» հանդիսանում եր միջին դարերի գրական-կուլտուրական արժեքների գրանցիող ամփոփումը մի կողմից, և նոր ժամանակավա, կապիտալիստական հպոխայի տղատարարությունը՝ մյուս կողմից: Յեթե Դանտեն դեռևս շատ թելերով կապված եր Փեղալական միջնադարի հետ, ապա Պետրարկան այս տեսակերպից մի քայլ առաջ եր Դանտեյի համեմատությամբ: Սակայն Պետրարկան նոույնպես իր բոլոր կապերը չկտրեց Փեղալական միջնադարից:

Բոկաչիոն առաջին գրողն եր, վոր ուժեղ քննադատության յինթարկեց այն ամենը, ինչ վոր կապված եր Փեղալական աշխարհի և նրա կուլտուրայի հետ: Նա առաջին գրողն եր նաև

այն տեսակետից, վոր նկատեց նոր ձեւավորվող կապիտալիտական հասարակության հակասությունները, բայց չկարողացավ և չեր կարող այդ եպոխայում յելք գտնել այդ հակասություններից:

Բոկաչիոյի թողած գրական ժառանգության մեջ համաշխարհային հոչակ են ստացել հատկապես նրա յերկու գործերը—«Ֆիտամետա» և «Պեկամետրոն»:

«Ֆիտամետա» Արևմտյան Յեկրոպայի գրականության պատմության մեջ առաջին ուելիստական—հոգեբանական վիպն եւ: Այս գործի մեջ զրականության հետաքրքրության առանցքը վերջնականապես դառնում եւ ուեալ մարդկային կյանքը, ինքը մարդը և նրան շրջապատող պատմական իրականությունը: Բոկաչիոյին չեյին հետո քը քը ում այն յերկույթները, վորոնք կապ չունեն մարդկային կյանքի հետ:

Սակայն Բոկաչիոյի գլուխ գործոցը նրա «Դեկամերոն» եւ: Իր գործի ներածության մեջ Բոկաչիոն պատմում եւ, վոր Փլորենտացի 7 յերիտասարդ աղջիկ և յերեք յերիտասարդ տղամարդ Ֆլորենցիայի հայտնի ժանտախտի ժամանակ (1348) վորոշում են հետանալ քաղաքից մի ավելի ապահով շրջան: Այստեղ նրանք մնում են տասն որ (դեկամերոն) և վորպեսդի ժամանակը տիրուր և միորինակ շանցնի, նրանցից ամեն մեկը որը մի պատմվածք և պատմում: Այսպիսով, ամեն մեկը պատմում եւ տասը պատմվածք և բոլոր պատմվածքների գումարը դառնում եւ հարցուր: «Դեկամերոնը» բաժանված եւ տասը որ պատմվածք, Ամեն մի մասում զետեղված եւ տասը պատմվածք ներքին բովանդակությամբ կազմում եւ մի ամբողջություն, բայց միաժամանակ ամեն մի պատմվածք հանդիսանում եւ կատարելապես ինքնուրույն գործ: Նույն սկզբունքով եւ կառուցված նաև ամբողջ «Դեկամերոնը»: Բոլոր հարյուր նովելները հանդես են գալիս վորպես մի կուռամբողջություն, բայց միաժամանակ ամեն մի նովելը կազմում եւ ընդհանուր շղթայի մի ինքնուրույն ողակը:

«Դեկամերոն»-ի մեջ Բոկաչիոն շոշափում եւ բազմաթիվ թեմաներ ու պրոբլեմներ: Նրա ամենահիմնական թեմաներից մեկը կղերա-Փեղալական աշխարհայացքի, կաթոլիկական յեկեղեցու և հոգևորականության քննադատությունն եւ: Այս տեսակետից Բոկաչիոյի ամենալավագույն գործերից մեկը վեցերորդ որվա տասներորդ պատմվածքն եւ—«Մասունքներ»:

Այս պատմվածքը մի ջախջախիչ քննադատություն ե  
ուղղված հոգեորականության դեմ: Բոկաչիոյի հանդես բերած  
վանականը՝ յեղացը Զիպոլան մի կատարյալ շարլատան ե,  
վոր որը ցերեկով խաբում ե զյուղացիներին, ոգտագործելով  
նրանց նախապաշարմունքները և դյուրահավատությունը: Բո-  
կաչիոն այստեղ մերկացնում ե հոգեորականության պորտա-  
բույժ կյանքը, թե ինչպես նրանք ապրում են ժողովրդի հաշ-  
կին, Զիպոլայի Զերտալդո գնալու նպատակը պարզ ենցած, նա  
տարին մեկ անգամ գնում եր այնտեղ հավաքելու այն գանձա-  
նակը, վորը նրան տալիս ելին «տիմար մարդիկ», ինչպես աս-  
ված ե պատմվածքի մեջ: Յել անա այդ գանձանակը հավաքե-  
լու համար Զիպոլան վոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում:  
Բայց միան Զիպոլան չեր այդպես: Այդպես եր վողջ հոգեվո-  
րականությունը և Բոկաչիոն ի դեմս Զիպոլայի մերկացնում  
ե իր ժամանակվա հոգեորականությանը՝ ցույց տալով թե ինչ-  
պես կրոնը այդ պորտաբույժ դասի ձեռքին մի հզոր զենք եր  
ժողովրդի ամենավերջին ունեցվածքը կողոպտելու դործում:  
Այդ իրական պատկերը տալով Բոկաչիոն սակայն դեմ չեր վոչ  
կրոնին և վոչ ել յեկեղեցւն: Նա հոգեորականությանը քըն-  
նադատում եր նրանց ուղղելու նպատակով, նա պայքարում եր  
հոգեորականության «թեռությունների» դեմ և աշխատում եր  
վերացնել այդ թերությունները: Բայց դուրս յեկալ այնպես,  
վոր յեթե յեկեղեցին և հոգեորականությունը վերացնելին Բո-  
կաչիոյի նշած «թեռություններց», ապա նրանք պետք ե դադա-  
րույին գոյւթյուն ունենալուց, վորովհետև դրանք այնպիսի  
«թերություն» երա եյին, վորոնք կազմում եյին յեկեղեցու և  
հոգեորականության եյուրյունը, առանց վորը նրանք չելին  
կարող գոյություն ունենալ:

Այսպիսով Բոկաչիոյի այս նովելան չնայած գրված ե հո-  
գեորականությանը ուղղելու նպատակով, բայց նա որեւկաի-  
վորեն ուղղված ե վողջ հոգեորականության դեմ և նովելալի  
մեջ հանդես բերած փաստերից ինքնին բխում ե յեկեղեցու և  
հոգեորականության բացասելու անհրաժեշտությունը—մի բան,  
վոր չնկատեց և չեր կարող նկատել ինքը՝ թ կաչիոն:

Չնայած Բոկաչիոն իր քաղաքական հայացքներով կապ-  
ված եր բուրժուազիալի հետ և բաժանում եր այդ դասակարգի  
սոցիալական նախապաշարումները, բայց նա առաջադրեց պրոբ-  
լեմներ, վորոնք ավելի լայն և ավելի մաքուր հորիզոններ ու-

նելին քան թե բուրժուազիայի դասակարգային պրակտիկան,  
Այդ պատճառով ել Բոկաչիոն չի կորցրել իր հետաքրքրու-  
թյունը և խոշոր արժեքը մեզ համար: Իոկաչիոյի թողած գրա-  
կան ժառանգությունը կարող եր գնահատվել և ամենալայն  
մասսաների իրական սեփականությունը դառնալ միայն և մի-  
այն Լենինի և Ստալինի ղեկավարությամբ կառուցված խոր-  
հըդային կարգերում:

#### Հ. Մամիկոնյան

Դուք զուցե՛ լսել եք, վոր Զերտարդոն<sup>1</sup> Ելսայի հովտում մի փոքր քաղաք ե և գտնվում ե մեր շրջանում: Թեև փոքր ե, բայց յերբեմն յեղել ե ազնվական ու բարեկեցիկ մարդկանց բնակավայրը: Յեվ վորովհետեւ աչտեղ լավ ոգուտ կար՝ դրա համար Սան Անտոնիովի միաբանության անդամներից մեկը, յեղբայր Զիպոլա անունով, վաղուց սովորություն ուներ տարին մեկ անգամ գնալ այնտեղ և հավաքել այն գանձանակը, վորը տալիս ելին տխմար մարդիկ: Նրան լավ ելին ընդունում վոչ այնքան բարեպաշտությունից մղված, ինչքան նրա անվան<sup>2</sup> համար, վորովհետեւ աչդ վայրը հայտնի է իր լավորակ սոխով վողջ Տուկանիալում: Այս յեղբայր Զիպոլան փոքր մարմնով, շիկահեր, զվարթադեմ և շատ ստանա մարդ եր: Նա թեև վոչ մի կրթություն չուներ, բայց այնքան գեղեցիկ ու ճարտար խոսող եր, վոր նրան շնանաչող մարդիկ վոչ միայն լավ հոետորի տեղ կընդունելին նրան, առ նաև կկարծելին թե Կիկերոնն<sup>3</sup> ե կամ Կվինտիլիանը<sup>4</sup>: Նա քաղաքի բոլոր բնակիչների

<sup>1</sup> Զերտարդո ավանը գտնվում ե Միջին Իտալիայի Տուկանիա նահանգում, վորի մայրաքաղաքը Ֆլորենցիան ե: Այս ավանումն ե ծնվել ու մեռել «Դեկամերոն»-ի հեղինակը՝ Ջովաննի Բոկաչչոն:

<sup>2</sup> Զիպոլա իտալերեն նշանակում ե սոխ:

<sup>3</sup> Կիկերոնը հին Հռոմի ամենաճարտասան հոետորն ե: Ապրել ե մեզանից 2000 տարի առաջ: Նրանից մնացած ճառերը «Ֆիլիպիկներ»-ը, «Կատիլինյանք» և այլն համարվում են լատին պերճախոսության ամենաբարձր նմուշներ:

<sup>4</sup> Կվինտիլիանը տպրել ե Կիկերոնից մեկ դար հետո, նույնպես լատին հոետոր ե: Իր «Արվեստ հոետորական»-ի մեջ

կամ կնքնահալրն եր, կամ բարեկամը, և կամ թե գաղտշապահը:

Մի անգամ ըստ իր սովորության, ոգոսառոս ամսին նա լեկել եր ադ գլուղը. կիրակի որ, յերբ շրջակա գյուղերից բազմաթիվ տղամարդիկ և կանալք հավաքվել ելին ծխական լեկեցին պատարագը լսելու՝ լեղբայր Զիպոլան հենց վոր նկատեց թե ժամը հարմար ե, առաջացավ դեպի ժողովուրդն ու ասաց. «Պարոններ և տիկիններ, ինչպես ձեզ լալտնի լե, դուք սովորություն ունեք ամեն տարի սուրբ Անտոնի աղքատներին ձեր հացահատիկից ու խոտից բաժին հանել, վոմանք շատ, վոմանք քիչ, նայած կարողութան և բարեպատութան, վորպեսզի լերանելի սուրբ Անտոնը պահպանի ձեր լեզները, եշերը խողերը և գառները: Բացի դրանից, դուք սովորություն ունեք վճարելու, մանավանդ ձեզանից նրանք, ովքեր անդամագրված են մեր լեղբայրության, այն փոքի իկ տուրքը վորը վճարվում ե տարին մեկ անգամ: Այդ նվիրատվությունները հավաքելու համար ե, վոր ինձ ուղարկել ե իմ մեծավորը, ալսինքն մեր արքահայրը: Ուստի, աստուծո որհնությամբ, լերբ իններորդ ժամագանգը լսեք՝ կզաք ալստեղ, լեկեցին դուրս, վորտեղ ըստ սովորության քարոզ կկարդամ և դուք ել կհամբուրեք խաչը Դեռ ավելին, քանի վոր լիս ձեզ ճանաչում եմ վորպես սուրբ Անտոնին խիստ հարգողներ, այս վորպես հատուկ շնորհ՝ ցուց կտամ ձեզ մի չափազանց սուրբ ու գեղեցիկ մասունք, վոր ինքս առանք բերել եմ անդրծովլա սուրբ լերկրից<sup>1</sup>: Դա Գաբրիել հրեշտակի փետուրներից մեկն ե, վոր մնացել ե սուրբ կուս

պայքարել ե նրանց դեմ, ովքեր ուզում եին ճարտասանությունը վերածել իրավախորհրդատույի և փաստաւանի արհեստի:

<sup>1</sup> Քրիստոնյաները նաև սուրբ յերկիր են անվանում Պաղեստինը, վորովհետեւ այնտեղ ըստ առասպելի, ապրել, քառողել և խաչվել ե Քրիստոսը:

Մարիամին աենյակում, լերբ յեկել եր նրա մոտ Նաղաբեթ քաղաքը ավետման համար»:

Այս խոսքերն ասելուց հետո նա լոեց և վերադարձավ իր պատարագը մատուցելու:

Յերբ յեղբայր Զիպոլան ճառում եր ալսպես, լեկեղեցում, բազմաթիվ ներկաների մեջ կային լերկու խիստ խորամանկ լերիտասարդներ. մեկի անունը Զովաննի դել Բրագոնիերա, մուսինը՝ Բոջո Պիցցինի: Նրանք իրար մեջ լեղբայր Զիպոլայի մասունքների վրա բավական ծիծաղելուց հետո թեև որա բարեկամներից ու ընկերությունից ելին, այնուամենանիվ մտածեցին մի խաղ խաղալ այդ փետրի դիմին: Տեղեկանալով, վոր լեղբայր Զիպոլան այդ առավոտը պետք ե նախաճաշեր դղյակում իր բարեկամներից մեկի հետ՝ հենց վոր իմացան թե նա սեղան ե նստել, իշան փողոց ու գնացին այն պանդոկը, վորտեղ իշխանել եր լեղբայր Զիպոլան, բայց նախորդը պայմանավորվեցին, վոր Բոջո Պիցցինին խոսակցության պիտի բռնվեր Զիպոլայի ծառաւի հետ, իսկ Զովաննին նրա իրերի մեջ պիտի վնտուր փետուրն ու վերցներ, վորպեսզի տեսներ, թե լեղբայր Զիպոլան ինչ եր ասելու ժողովրդին այդ մասին:

Յեղբայր Զիպոլան մի ծառա ուներ, վորին վոմանք անվանում ելին Գուչո Բալենա (կետ ձուկ), վոմանք Գուչո Իմբրատա (կեղտոտություն) և վոմանք ել Գուչո Պորկո (խոզ): Այդ ծառան այնքան տգեղ եր, վոր Լիպո Տոպօն<sup>2</sup> նրա նսանը բոլորովին չի նկարել: Յեղբայր Զիպոլան հաճախ եր շրջանում ծաղրում նրան և ասում, ոիծ ծառան ինն այնպիսի հատկություններ ունի, վոր

<sup>1</sup> Ըստ քրիստոնյական հավատի Գաբրիել հրեշտակապետը այցելեց կույս Մարիամին Նաղաբեթ քաղաքում և ավետեց նրան, վոր ունենալու յե մի վորդի՝ Հիսուսը:

<sup>2</sup> Նկարչի անունը:

լեթե գրանցից մեկնու մեկը ունենալին Սողոմոնը<sup>1</sup>, Արիստոտելը<sup>2</sup> կամ Սենեկան<sup>3</sup> բավական եր փչացնելու նրանց ամբողջ առաքինությունը, խելքն ու սրբությունը: Ուրեմն պատկերացրեք թե ինչ մարդ ե նա, քանի վոր ինն այսպիսի հատկություններ ունենալով՝ վոչ առաքինություն ունի, վոչ խելք և վոչ ել սրբություն: Յեզ վորովինու հարցնում ելին, թե վորոնք են այդ ինն հատկությունները՝ Զիազոլան ել վոտանավորով այսպես եր ասում.

«Ծույլ ե, կեղտոտ ու ստախոս,  
Անփութ, անհնաղանդ ու չարախոս,  
Անող, անմիտ ու անբարո»:

Բացի սրանցից, նա այլ թերություններ ել ունի, վոր ավելի լավ ե չասել: Իսկ ամենածիծաղելին այն ե,

<sup>1</sup> Հրեաստանի թագավոր, ապրել ե մեղնից 3000 տարի առաջ. վորդին ե Դավիթ թագավորի (կամ մարգարեյի): Նրա տպաւատի ճոխությունը ի հաշիվ աշխատավորների շահագործման՝ հաճախ ապստամբություններ և առաջացրել Արևելյան ժողովուրդները ավել են նրան իմաստուն մակդիրը:

<sup>2</sup> Հին Հունաստանի մեծագույն մտածողներից ու գիտնականներից մեկը, Յեղել և նշանավոր փիլիսոփիա Պլատոնի աշակերտը և հիմնել ե Աթենքում մի փիլիսոփայական դպրոց: Միջին դարերում ունեցել ե բացառիկ հեղինակություն: Նրա գլխավոր գործերից են «Եթիկա», «Անալիտիկա», «Մետաֆիլիկա», «Պոետիկա», «Պոլիտիկա», «Մետեորոլոգիա» և այլն: Ապրել ե մեղնից մոտ 2400 տարի առաջ:

<sup>3</sup> Հռոմեացի ստոիկ փիլիսոփա: Ծնվել ե Սպանիայում մեղանից 1935 տարի առաջ: Ապրել ու գործել ե Հռոմում: յեղել և ներոն կալսորի դաստիարակը, Մեղադրվեց ներոնին սպանելու մտադրություն ունենալու համար, դատապարտվեց մահվան և ինքնասպան լեզավ 68 տ. հասակում: Բացի դիալոգներից, ալբակտաներից և նամակներից, վորոնց վոճը սեղմ ե և ուժեղ, գրել ե մի քանի վողբերգություններ, բայց իր հոչակը ձեռք բերել առաջինների համար:

վոր ամենուրեք ուզում ե ամուսնանալ և բնակարան վարձել: Յեզ վորովինու իբրաք, սև ու փալուն մորուս ունի, վոր նրա կարծիքով խիստ գեղեցիկ ու գուրեկան ե, ապա նա յերևակայում ե, վոր իրեն տեսնող բոլոր կանալք սիրահարվում են իրեն և յեթե թողնեն կվազի նրանց լետնից գոտին կորցնելու աստիճան: Ճիշտ ե, վոր ինձ ոգնում ե, դրա համար ել չկա վորեե մարդ, վոր ինչքան ել թագուն բան ասի ինձ՝ նա չուզենա դրա բաժինն ստանալ: Իսկ յեթե պատահում ե, վոր մի բան են պահանջում ինձնից, նա այնքան ե վախենում, վոր լես չկարողանամ պատասխանել, ուստի ինքն ե պատասխանում՝ այս կամ վոչ, նայած թե վորն ե հարմար նկատումք:

Յեղբայր Զիազոլան թողնելով նրան պանդոկում՝ պատվիրել եր լավ հսկել իր իրերին և թույլ չտալ վոր վորեե մեկը ձեռք տա դրանց, մանավանդ պարկերին, վորովինու գրանց մեջ ելին սուրբ բաները:

Բայց Գոչո Իմբրատան շատ ավելի ցանկանում եր մնալ խոհանոցում, քան թե սոխակը կանաչ ճյուղի վրա, մանավանդ լերը իմանում եր, վոր վորեե աղախին կար ալդտեղ: Այդ որը պանդոկի խոհանոցում տեսել եր մի ճարպոտ ու չաղ, փոքրիկ, տձեւ ու տգեղ, աղբի կողովների նմանվող զուրդ ստինքներով, քրտնաթաթախ, ճենձոտ ու ծխաբույը աղջիկ, ուստի թողեց յեղբայր Զիազոլայի սենյակն ու իրերն անտեր և լեշի վրա հարձակվող անդդի նման գնաց խոհանոց:

Թեև ոգսատոս ամիսն եր, բայց և այնպես նա նըստեց կրակի մոտ և սկսեց խոսսակցության բռնվել այդ տգեղ աղջկա հետ, վորի անունը նուտա լեր, և ասաց, վոր ինքն աղնվական ե, փոխարինաբար<sup>1</sup>, հազարավոր վոսկիներ ուներ և կարող եր ուրիշ շատ հրաշալի բաներ ել ասել:

<sup>1</sup> Հայտնի լե, վոր փոխարինաբար կամ լիազորությամբ կարելի յե կատարել վորեե մատչելի աշխատանք, բայց չի կարելի

Յեզ ուշադրություն չդարձնելով գլխին դրած կը ն-  
գուղին, վորի վրայի ճարպի հաստ շերտը բավական եր  
Ալտոպաշոյի կաթսալի ճաշը պատրաստելու համար ել, և  
իր պատառոտած, կարկատած բաճկոնին, վորի ոճիքի  
շուրջն ու թեատրակերը քրտոնքով ծծված ելին և կազ-  
մում ելին այնպիսի նաշխեր, վոր վոչ մի թրքական կամ  
հնդկական գորդի վրա չի կարելի գտնել. Գուշոն չնա-  
ւած բոլորովին ծոված կոշիկներին ու քրքրված գուլպա-  
ներին՝ այնպես եր խոսում, կարծես իշխան Կաստիլիոնը  
լիներ, ասելով, թե ուզում ե գեղեցիկ շորեր տալ նրան,  
բարելավել նրա դրությունը, ազատել նրան ուրիշներին  
ծառաւելու արդ ստոր վիճակից, և առանց մեծ հարստու-  
թյուն ունենալու՝ կարող ե լավագույն դրության հաս-  
նելու հույս տալ, և ուրիշ շատ արդպիսի բաներ. Ու ու են  
այս բոլորը շատ սիրալիր շեշտով ասաց, բայց դրանք  
վերածվեցին քամու, ինչպես նրա գեղեցիկ ձեռնարկնե-  
րի մեծ մասը և հանգան վոչնչի:

Այսպիսով լերկու լերիտասարդները Գուչո Պորկոյին  
դտան Նուտալով զբաղված և չափաղանց ուրախանալով  
այս պատեհությունից, վորով իրենց ջանքի կեսը վերա-  
նում եր և ուրիշ արգելքի չհանդիպելով՝ մտան լեզրալը  
Զիպոլլայի սենյակը. Սենյակը բաց եր և առաջին բանը,  
վոր նրանց աչքին կպալի փետուրը պարունակող պարկն  
եր. Պարկը բաց արին և բազմաթիվ սնդուսներով փա-  
թաթված մի փոքրիկ արկղիկ գտան, վորտեղ մեկ հատ  
թութակի պոչի փետուր կար. Ի բանք իսկու ին լենթադրե-  
ցին, թե դա այն փետուրն եր. վոր վանականը խոստա-  
ցել եր Զերտալդոյի բնակիչներին ցուց տալ. Յեզ յսկա-  
պես, արդ տարում նա հեշտությամբ կարող եր խաբել

փոխարինաբար ուրիշի հանձնել վորեն սոցիալական դրություն:  
Հեղինակն այստեղ հեղնում ե Բուշոյին:

Նրանց, վորովհետեւ Յեզիպտոսի պետանքի առարկաները՝  
գեռ շատ քիչ ելին Տուկանիա թափանցել, ինչպես դրա-  
նից հետո յեն փոխադրվել ի մեծ վնաս իտալիալի. Յեզ  
յեթե ալդ առարկաներն արդեն ճանաչվում ելին, վորոշ  
լեռկրներում, ապա ալդ գավառի բակիչները վոչինչ  
չգիտելին դրանց մասին և վոչ միայն թութակ չելի. տե-  
սել, ազն չելին կարող հիշել վոր յերբեմ սել են աղ  
մասին: Ալսպիսով յերիտասարդները խիստ ուրախացան  
փետուրը գտնելու. համար, վերցրին այն և արկղիկը դա-  
տարկ չթողնելու համար սենյակի անկունում ածուխ  
տեսնելով ածեցին արկղիկի մեջ, փակեցին այն և առեն  
բան զրին այնպես, ինչպես գտել ելին սենյակը մտնելիս  
Ապա առանց նկատվելու, վերցրին փետուրն ու դուրս  
գնացին՝ սպասելու թե ինչ պիտի ասեր յեղբար Զիպոլ-  
լան փետուրի տեղ ածուխ գտնելով:

Յեկեղեցում գտնվող միամիտ սարդիկ ու կանալք լը-  
սելով, վոր ինսերորդ ժամու զանգից հետո պետք ե Գաբ-  
րիել հրեշտակի փետուրը տեսնեն՝ պատարագից անմի-  
ջապես հետո տուն վերագարձան և արդ լուրն իրար հա-  
ղորդեցին. հարևանը հարևանին, խնամին խնամուն: Ապա  
շտապով ճաշելուց հետո մարդկանց ու կանանց մի այն-  
պիսի բազմություն վազեց դղյակը, վոր հազիվ կարողա-  
ցան տեղ գտնել և մեծ համբերությամբ սպասեցին փե-  
տուրը տեսնելուն:

Յեղբար Զիպոլլան մի լավ ճաշելուց ու մի քիչ  
քնելուց հետո, ինսերորդ ժամու զանգից սեկ ըուպե անց  
վեր կացավ ու տեսնելով փետուրը դիտելու համար հավաք-

<sup>1</sup> Յեզիպտոսի պերճանքներ ասելով հեղինակն ակնարկում  
ե արևադարձալին թռչունների գույնզգույն փետուրները, վոր այդ  
ժամանակներից սկսած մտան Յեզիպտոս, վորպիս կանանց ու  
տղամարդկանց գլխանոցների զարդ: Յեզիպտոսն արդ ժամանակ  
Աֆրիկայի ծանոթ մասի ամենահայտնի յերկիրն եր և համար-  
ժեք եր Աֆրիկա բառին:

ված այդ բազմութիւնը՝ մարդ ուղարկեց Գուչո Իմբըատալին ասելու վոր բերեր զանդակիկներն ու պարկը։ Գուչոն մեծ ցավով բաժանվելով խոհանոցից ու Նուտագի շրջագգեստից՝ պահանջած իրերն առնելով գնաց յեկեղեցին։ Յերբ շնչասպառ այնտեղ հասավ (վորովհետեւ խմած ահագին քանակությամբ ջրից փորն ուռել եր) յեղբայր Զիպոլալի կարգադրությամբ գնաց դեպի յեկեղեցու դուռը և սկսեց ամբողջ ուժով զանգերը հնչեցնել։

Յերբ ամբողջ ժողովուրդը հավաքվեց, յեղբայր Զիպոլան առանց նկատելու, վոր իր իրերին ձեռք են տվել՝ սկսեց պատարագը և ի հիմնավորում իր պնդումների՝ շատ յերկար խոսեց։ Իսկ յերբ Գաբրիել հրեշտակի փետուրը ցուց տալու պահը յեկավ, մեծ հանդիսավորությամբ խոստովանանքը կատարեց, յերկու շահ վառել տվեց, յերկուղածությամբ արձակեց արկղիկի մնդումները, հանեց վեղարը, դուրս բերեց արկղիկը ու բաց արեց՝ մի քանի խոսք ասելու ի փառաբանություն Գաբրիել հրեշտակի և նրա մասունքի։ Տեսնելով արկղիկն ածուխով լցված՝ նա վոչ մի կասկած չտարավ Գուչո Բալենալի վրա, վորովհետեւ գիտեր, վոր նա անընդունակ ե ալդպիսի խաղ խաղալու, և վոչ ել անիծեց նրան, վոր լավ չեր պահպանել և ալդպիսով ուրիշներին հնարավորություն եր տվել այդ բանն անելու։ Նա խիստ կամացուկ ինքն իրեն հայիուեց, վոր մասունքների պաշտպանությունը նրան եր վստահել, քանի վոր գիտեր նրա անփութությունը, անհնազանդությունը, ծուլությունն ու հիշողությունից զուրկ լինելը։ Բայց և այնպես առանց դեմքն այլալելու՝ աչքերն ու ձեռքերը յերկինք բարձրացնելով, ասաց ամենքին լսելի ձայնով. «Ո՞վ աստված, թող քո զորությունը հավիտան փառաբանած լինի»։ Ապա վակելով արկղիկը և դառնալով դեպի ժողովուրդն՝ ասաց.

«Պարոնալք և տիկնալք, դուք պետք ե իմանաք, վոր

յերբ յես բոլորովին յերխուսաւրդ ելի, իմ մեծավորն ինձ ուղարկեց այն յերկրները, վորտեղ արկն ե ծագում և հրամատեց ինչ գնով ել լինի փնտուել ու գտնել Պորչելլանայի (Խոճկորների) մենաշնորհները, վորոնք կնքելլթեև դժվար չե, բայց ուրիշներին ավելի ոգտակար ե, քան մեզ<sup>1</sup>։ Դրա համար ել ճանապարհ ընկնելով՝ մեկնեցի Վենետիկից հասա հուների քաղաքը. ալդտեղից ել Գարբի թագավորության և Բալկատայի վրայով հասա Պարիսն, ապա խիստ ծարավելով՝ մի քանի ժամանակ ճետո հասա Սարդինիա<sup>2</sup>, Բայց ինչու յեմ պատմում այս ըոլոր յերկրների մասին, վորտեղ փնտուել եմ. Սուրբ Գեղորգի նեղուցն անցնելով՝ հասա Տրուֆիա և Բուֆիա (Խաբեստան և Փչոցստան), մի խիստ բազմամարդ աշխարհ, ալդտեղից ել հասա Ստաստան, վորտեղ հանդիպեցի մեր յեղբայրներից շատերին, վորոնք բոլորն ել փախչում ելին այդ յերկրի դժվարություններից և խիստ քիչ մտահոգվելով ուրիշների քաշած նեղությունների մասին՝ հետապնդում ելին սոսկ իրենց ոգուտը և ծախում ելին միմիայն անդրոշմ փողեր։ Ալդտեղից ել հասա Սբրուցների յերկիրը, վորտեղ տղամարդիկ ու կանաք փախտեկողիկներով են քալում լեռներում և խողերին հազցնում են իրենց իսկ աղիքները։ Դրանից քիչ հեռու, տեսա թե

<sup>1</sup> Այս «կնքված մենաշնորհներ» արտահայտությամբ հեղինակը հավանաբար ակնարկում ե միջին դարերում կաթոլիկ յեկեղեցու վաճառած մեղքի թողության թղթերը — ինդուլցիաները կամ ուրիշ սնոտիապաշտությունից ոգտվելու միջոցները։

<sup>2</sup> Մեծ կղզի յե Միջերկրականում, Կորսիկայի մոտ Բայց Վենետիկն ու Սարդինիան խիստ հակադիր կետեր են, իսկ Զիպոլան նկատի առնելով ժողովրդի տգիտությունը և ինքն ել տգիտ լինելով, թվում ե մի շարք աշխարհագրական քիչ թե շատ հեռու վայրեր, վորից հետո սկսում ե անհեթեթ բաներ ասել, ինչպես յերեւում ե հետագա ամբողջ պարբերությունից։

հնչպես մարդիկ հացը տանում ելին ձեռնափայտերի վրա, իսկ գինին տոպրակների մեջ։ Այս յերկրներից հետո հասա Բաքոսի լեռներին, վորտեղ բոլոր ջրերը ներքե են վազում և շատ չանցած այնքան առաջ դնացի, վոր հասա Պատինակյան Հնդկաստան, վորտեղ, յերդվում եմ իմ հագած գգեստով<sup>1</sup>, տեսա թե ինչպես ոճերը թռչում են— անհավատալի բան բոլոր նրանց համար՝ ովքեր չեն տեսել։ Բայց այս բոլորի մասին ինձ սուտ չի հանի Մազիո գել Սաջոն, մի մեծ վաճառական, վորին յես հանդիպեցի այնտեղ և վորն զբաղված եր ընկույզ ջարդելով և կը։ Ճեպները մանրածախ վաճառելով։ Բայց չկարողանալով փնտուածս գտնել և նկատի առնելով, վոր դրանից դենը ծովով են գնում<sup>2</sup>, յես ել ստիպված յետ դարձա ու հասա այն սուրբ տեղերը, վորտեղ ամառը թարմ հացը ծախվում ե չորս դինարի, իսկ տաք հացը ձրի յե։ Այդ տեղ հանդիպեցի գերապատիվ հայր Մի պարսավիր ինձին՝ Յերուսաղեմի արժանավորագույն պատրիարքին, վորն ի հարգանք իմ հագած սուրբ Անտոնի կարգի զգեստի, ցանկացավ, վոր տեսնեմ իր առջեր դարսված բոլոր մասունքները։ Այնքան շատ ելին դրանք վոր յես չելի ցանկանա ձեզ թվել, վորովհետեւ մի քանի հազար հատ համբեկուց հետո ել չեմ վերջացնի։ Բայց վորպեսզի ձեզ անձրևիթառ չթողնեմ, ապա դրանցից մի քանիսի մասին կը խոսեմ։ Նախ և առաջ ցուց տվեց սուրբ հոգու մի մատը այնքան լրիվ ու առողջ, ինչքան առաջ ել չեր յեղել, ապա սեռովեցի դունքը, վոր յերեաց սուրբ Ֆրանցիսկովին,

<sup>1</sup> Զիպոլան լինելով կրոնավոր, իր հագուստը (սքեմը) բամբում եր նվիրական ըստ յեկեղեցական կանոնադրության։

<sup>2</sup> Զհաշվելով Զիպոլայի թված չեղյալ յերկրները, ընդունելով նույնիսկ իրական յերկրները՝ մինչեւ այդ վայրը հասնելը պետք ե անցնել բազմաթիվ ծովերից։ Մինչդեռ Զիպոլան մինչեւ Հնդկաստան հասնելն իրը թե ծովի չի հանդիպել։

քերովբեների<sup>1</sup> յեղունգներից մեկը, կաթոլիկական սուրբ հավատքի հագուստաները, մողերին արևելյան կողմը յերեգցած աստղի մի քանի ճաճանչները, մի սրվակ՝ լի սուրբ Միքայելի քրտինքով՝ յերբ նա կովում եր սատանայի հետ, սուրբ Ղազարի կղակը և ուրիշ շատ բաներ։ Յեվ վորովհետն յես ել վեհանձնաբար նվիրեցի նրան Մոնտե-Մորելլովի ուամկերենը և Կապրիցիոյից մի քանի գլուխս, վոր նա վաղուց փնտում եր, նա ինձ բաժին հանեց այդ մասունքներից—սուրբ խաչի ատամներից մեկը, Սողոմոնի տաճարի զանգերի զողանջներից պարունակող մի սրվակ, Գաբրիել հրեշտակի փետուրը, վորի մասին պատմեցի ձեզ, սուրբ Գերարդ դա վիլա Մագնալի մի փայտե կոշիկը, վոր վերջերս տվել եմ Ֆլորենցիայի Գերարդ դա Բոնսիեն, վոր մեծ յերկուղածություն ե տածում դեպի նա։

Պատրիարքը տվեց նաև այն ածուխից, վորով խորվվեց յերանելի նահատակ սուրբ Լավրենտիոսը։ Այդ բոլոր բաները յես բարեկաշտորեն ինձ հետ եմ բերել։ Ձիշտն ասած, թեև իմ մեծավորը վոչ մի ժամանակ թույլ չի տվել, վոր ցուց տամ դրանք, մինչև վոր ինքը չհամոզվի, վոր դրանք իսկականներն են, բայց այսոր նրանց կատարած հրաշճները տեսնելով և պատրիարքից նամակներ ստանալով, մեծավորս միամտվել ե և թույլ տվել վոր ցուց տամ, բայց յես վախենալով ուրիշներին վստահելուց՝ շարունակ մոտս եւ պահում դրանք։ Ձիշտ ե նաև, վոր ինձ մոտ մի արկղիկի մեջ պահում եմ Գաբրիել հրեշտակի փետուրը, վորպեսզի ամենսին չփշանա, իսկ մի ուրիշ արկղիկի մեջ այն ածուխիր, վորի վրա խորովվեց սուրբ Լավրենտիոսը։ Բայց այդ յերկու արկղիկներն այն-

<sup>1</sup> Սերովբեներն ու քերովբեները, ըստ քրիստոնեյական հավատի, հրեշտակների հատուկ գնդեր են, այսպես ասած, յերենային իշխանության բանակի հրամանատարական կազմն են։

քան նման են իրար, վոր հաճախ մեկի փոխարեն մլուսն եմ վերցնում, ինչ վոր հիմա ել ե պատահել, այնպես վոր, կարծելով թե այստեղ բերածս փետուր պարունակած արկղիկն ե, բերել եմ այն, վորի մեջ ածուխն ե:

Յես չեմ կարծում, վոր դա մի պարզ սխալմունքի հետեանք ե, ընդհակառակը, ինձ թվում ե վոր դա աստուծո կամքովն ե արված և նա ինքն ե այս արկղիկը դրել իմ ձեռքը վորովհետեւ, հիմա միշտն հիշեցի, վոր յերկու որ հետո սուրբ Լավրենտիոսի տոնն և Յեփ քանի վոր աստված ցանկանում ե, վոր նրա մարմինը վառող ածուխը ձեղ ցուց տալով՝ վառեմ ձեր սրտերում այն բարեպաշտությունը, վոր դուք պարտավոր եք տածել նրան, ուստի նա ինձ վերցնել ե ավել վոչ թե փետուրը, վոր ձեղ ցուց պիտի տալի՝ այլ լերանելի ածուխները, վորոնք ներծծված են զեռ սուրբ Լավրենտիոսի սրբազնագույն մարմին հոտով: Ուստի, որհնամլ վորդիք, հանեցեք ձեր գլխարկները և լերկուղածորեն առաջացեք տեսնելու դրանք: Բայց նախքան այդ, ասեմ, վոր բոլոր նրանք, վորոնց վրա այս ածուխով խաչի նշան արվի, կարող են փող տարին ապրել, ապահովված լինելով, վոր կրակը նրանց կողմելիս անպայման կչքանաց:

Այսպես խոսելուց հետո յեղբայր Զիալուան մի որհներգ լերգեց ի փառաբանություն սուրբ Լավրենտիոսի ու բանալով արկղիկը ցուց տվեց ածուխը: Յերբ հիմար ամբոխը լերկուղած հիացմամբ մի քանի րոպե դիտեց դրանք, բոլորն ել մեծ փութկոտությամբ մոտեցան նրան և սովորականից ավելի մեծ նվեր տալով՝ խնդրեցին, վոր բարեհաճի խաչի նշանը գծել: Դրա համար ել յեղբայր Զիալուան, վերցնելով ածուխը, սկսեց սպիտակ շապիկների, հագուստների և կանանց քողերի վրա վորքան կարող եր խոշոր խաչեր գծել, պնդելով թե վորքան ածուխը գործ ե ածվում խաչ գծելով, այնքան ել ավելանում ե արկղիկում:

Այսպիսով իր համար մեծագույն ոգուտ ապահովելով և Զերտալդովի բոլոր բնակիչներին խաչագծելուց հետո՝ Զիալուան իր հարամատությամբ մի լավ ծիծաղեց նրանց վրա, ովքեր փետուրը գողանալով կարծել ելին թե ծիծաղում են նրա վրա: Այս վերջինները՝ Զովաննին ու Բոջոն, վոր ներկա ելին քարոզին և լսեցին թե ինչպիսի լեղանակով դործից դուրս յեկավ Զիալուան, շատ հեռվից սրկությունը և շատ լերկար-բարակ խոսելով, այնքան ծիծաղեցին, վոր շունչները հատակ: Յերբ բազմությունը ցրվեց, նրանք գնացին Զիալուանի մոտ և խիստ շնորհալի ձեռվ պատմելով իրենց արածը, վերագարձրին նրա փետուրը, վոր հաջորդ տարին պակաս ոգուտ չտվեց, ինչքան վոր ածուխն եր տվել այդ որը:



Գլուխակի լիտոր Կ—4657. Հըստ. 4242, Պատվեր 1084, Տիրաժ 4000.  
Թուղթ 62×94. Տպագրական 1½ մամ. Մեկ մամուլում 38400 սել.  
Հեղինակային 1½ մամուլ.

Գետհրատի տողարան, Յերևան, Լենինի փող. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0310429

7922

ԳԻՒԾ 60-Կ

95

Հ. ԵՍԿՐԱՅԾ  
ՄՕՇԻ  
Բարձր Արտ. ՀՀՀ, Երևան 137 բ.